

Թեստի կառուցվածքը և գնահատման չափանիշները

Թեստը կազմված է 3 բաժիններից, որոնք վերաբերում են գիտելիքների տարբեր ոլորտների՝ **հայագիտություն, մաթեմատիկա և բնագիտություն**: Բաժիններում ընդգրկված առաջադրանքների քանակներն են՝ հայագիտություն – 26, մաթեմատիկա – 22, բնագիտություն – 32:

Առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում՝ 0:

Թեստի առավելագույն միավորը 80 է:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞րն է տրված նախադասության քերականական և տրամաբանական ճիշտ շարունակությունը:

Մարերը փարթամ մուգ կանաչ էին հագել, և միայն

- 1) եկեղեցու բակում խոտն այնքան շատ էր
- 2) ամպերի տակ ձյան մանրիկ շերտեր դեռ սպիտակին էին տալիս
- 3) քարաքոսն ու մամուռը զարնան խոնավությունից ուռճացել էին
- 4) սարյակները ճովողում էին կտուրների տակ կամ տանձենու ճյուղերին

2. Նախադասությունների քերականական և տրամաբանական դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:

1. Դա ուրեմն գիշերն է՝ անապատային քո օրվա ամենալավ ժամը:
2. Այդ կողմերում ճամփորդելիս ավտոբուսի լուսամուտից միայն մի բան էս տեսնում՝ անապատ:
3. Ավազը երբեմն սպիտակ է երևում, երբեմն՝ դարչնավուն, մայրամուտի տակ այդ դարչինը կամ սպիտակը նարնջին է տալիս և ապա սևանում:
4. Անապատ ասածը բոլոր կողմերի վրա փովող անվերջ ավազ է, ամենատարբեր ձևեր ու տեսակներ դարձող կակտուս ու համատարած արև:

- 1) 2, 4, 3, 1
- 2) 2, 3, 4, 1
- 3) 4, 3, 1, 2
- 4) 4, 2, 3, 1

3. Ո՞ր տարբերակում են սխալ համապատասխանեցված կոմպոզիտորի և նրա ստեղծագործության անունը:

- 1) Առնո Բաբաջանյան.«Հերոսական բալլադ»կոնցերտ
- 2) Արամ Խաչատրյան. «Մպարտակ» բալետ
- 3) Ալեքսանդր Սպենդիարյան. «Գայանե» բալետ
- 4) Արմեն Տիգրանյան. «Անուշ» օպերա

4. Փավստոս Բուզանդի «Արշակ և Շապուհ»հատվածում Շապուհի ո՞ր հարցին է Վասակը այսպես պատասխանում. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ Հունաց թագավորը»:

- 1) Ի՞նչ երկու լեռներ էին կազմում քո երկրի սահմանը:
- 2) Այդ ի՞նչ լեռներ են, որ դու գետին էիր տանում:
- 3) Այդ ո՞ր լեռներն էին, որ այդպես ճնշում էին քեզ:
- 4) Որո՞նք էին այդ լեռները, որ միշտ դաշնակցել են քեզ:

5. Ո՞վ է բանաստեղծության հեղինակը:

Կարմիր ծաղիկ մը գարունի....

Առտու մ'ինձի նվիրեցիր.

Ըզգացի թե տենդեր ունի

Երազկոտ միտքըս ուշացիր:

- 1) Պետրոս Դուրյան
- 2) Միսաք Մեծարենց
- 3) Դանիել Վարուժան
- 4) Սիամանթո

6. Ո՞վ է «Մենք ենք, մեր սարերը» վիպակի և նույնանուն կինոսցենարի հեղինակը:

- 1) Սերո Խանգադյանը
- 2) Հրանտ Մաթևոսյանը
- 3) Մուշեղ Գալշոյանը
- 4) Խաչիկ Դաշտենցը

7. Տրվածներից ո՞րը չի հիշատակվում Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության մեջ:

- 1) աղոթք դարձած երկաթագիր գրքերը
- 2) թեքված մատուռներ ու բերդի տեղահան դուռ
- 3) մթնում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը
- 4) նաիրյան աղջիկների հեզաճկուն պարը

8. Ինչո՞ւ դանիելյան նշանագրերը հնարավոր չէր գործածել որպես հայոց այբուբեն:

- 1) Դրանք գործածվում էին ասորերեն գրելու համար:
- 2) Թերի էին և հայերենի վանկային կապերը ամբողջությամբ չէին արտահայտում:
- 3) Հին էին, ուրիշ դպրություններից թաղված և հարություն առած:
- 4) Ոչ թե հնչունային, այլ վանկային գիր էին:

9. Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադում ի՞նչ է պահանջում արքայադուստրը իր հետ ամուսնանալ ցանկացող քաջերից:

- 1) մրցամարտում հաղթող ճանաչվել
- 2) անգին քարեր ու գոհարներ բերել
- 3) հաղթել յոթգլխանի դևին
- 4) բերել անշեջ հուրը

10. Ստեղծագործություններից որի՞ հեղինակը Վիլյամ Մարոյանը չէ:

- 1) «Մարդկային կատակերգություն»
- 2) «Իմ սիրտը լեռներում է»
- 3) «Իմ անունը Արամ է»
- 4) «Ծերունին ու ծովը»

11. Ռաֆայել Պատկանյանի բանաստեղծության ո՞ր բառն է բաց թողած:

*Թո՛ղ որսո՛ղ, արի՛, քաջասի՛ ըտ բազե,
Քու երգը գուցե իմ որդին կուզե...
Բազեն որ եկավ, որդիս լռեցավ,
..... երգերի ձայնով քնեցավ:*

- 1) թռչնի
- 2) ուզմի
- 3) օրորի
- 4) մայրենի

12. Ո՞րն է Հրայր Աճառյանի աշխատության վերնագրում բաց թողած թիվը. «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ լեզուների»:

- 1) 562
- 2) 100
- 3) 200
- 4) 340

13. Ո՞վ է «Եռանկյունի» ֆիլմի ռեժիսորը:

- 1) Հենրիկ Մալյանը
- 2) Ֆրունզե Դովլաթյանը
- 3) Համո Բեկնազարյանը
- 4) Սերգեյ Փարաջանովը

14. Ո՞վ է «Նոյն իջնում է Արարատից» նկարի հեղինակը:

- 1) Հովհաննես Այվազովսկին
- 2) Մարտիրոս Սարյանը
- 3) Հակոբ Կոջոյանը
- 4) Մինաս Ավետիսյանը

15. Համապատասխանեցրեք բառերը իմաստներին:

Բառեր	Իմաստներ
Ա) միակտոր պինդ քար	1) գրաստ
Բ) եկեղեցու բակը	2) վիրապ
Գ) խոր փոս	3) գավիթ
Դ) բեռնակիր կենդանի	4) վեմ
	5) կաճան

Ա	Բ	Գ	Դ

16. Համապատասխանեցրեք մարզիկի անունը իր մարզաձևին:

Մարզիկ	Մարզաձև
Ա) Ալբերտ Ազարյան	1) ըմբշամարտ
Բ) Յուրի Վարդանյան	2) ծանրամարտ
Գ) Իսրայել Հակոբկոխյան	3) մարմնամարզություն
Դ) Լևոն Ջուլֆալակյան	4) բռնցքամարտ
	5) ֆուտբոլ

Ա	Բ	Գ	Դ

17. Ո՞ր եկեղեցին է պատկերված նկարում:



- 1) Գանձասար
- 2) Ս. Խաչ
- 3) Ղազանչեցոց
- 4) Վարագավանք

18. Հետևյալ տոհմերից ո՞րը չի թագավորել Հայաստանում:

- 1) Բագրատունի
- 2) Արշակունի
- 3) Ամատունի
- 4) Երվանդունի

19. Հայաստանն աշխարհի ամենաշատ մայրաքաղաքներ ունեցող երկրներից է: Տրված քաղաքներից ո՞րը հայոց մայրաքաղաք չի եղել:

- 1) Արտաշատ
- 2) Վաղարշապատ
- 3) Վան
- 4) Արշամաշատ

20. Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող այդ գետն իր ողջ երկարությամբ հոսում է մեր հայրենիքով, որի պատճառով էլ ժողովուրդը գետն անվանել է «Մայր գետ»։ Ո՞ր գետի մասին է խոսքը:

- 1) Որոտան
- 2) Արածանի
- 3) Արաքս
- 4) Կուր

21. Թվարկվածներից ո՞վ է Բագրատունյաց արքայատոհմի արքա:

- 1) Երվանդ Սակավակյաց
- 2) Լևոն Մեծագործ
- 3) Տիգրան Մեծ
- 4) Աշոտ Ողորմած

22. Ստորև ներկայացված գորատեսակներից ո՞րը չէր կարող լինել Կիլիկյան Հայաստանի բանակի մաս.

- 1) հեծելազոր
- 2) հրետանի
- 3) հետևակ
- 4) նավատորմ

23. ՀՀ ազգային այդ հերոսը 1991 թ. գարնանը ղեկավարել է գետաշենցիների հերոսական պայքարը, եղել է Գետաշեն-Մարտունաշեն ենթաշրջանի ընդհանուր հրամանատար: Ու՞մ մասին է խոսքը.

- 1) Մոնթե Մելքոնյան
- 2) Թաթուլ Կրպեյան
- 3) Մովսես Գորգիսյան
- 4) Զիվան Աբրահամյան

24. Նեմեսիս գործողության մասնակից այդ հայորդին, ով սպանել էր Թալեաթին, դատավարության ժամանակ հայտարարեց . «Այո, ես մարդ եմ սպանել, բայց մարդասպան չեմ» . Ո՞վ է այդ հայորդին:

- 1) Ա. Շիրակյան
- 2) Ս. Թեհլերյան
- 3) Ա. Երկանյան
- 4) Ա. Գևորգյան

25. Հայոց գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի վերաբերյալ հետևյալ պնդումներից ո՞ր է սխալ:

- 1) Ծնվել է Տարոն գավառի Հացեկաց գյուղում:
- 2) Երիտասարդ տարիքում սովորել է հունարեն ու ասորերեն:
- 3) Եղել է զինվորական , այնուհետև դարձել է հոգևորական:
- 4) Շարունակել է Մովսես Խորենացու « Հայոց պատմությունը»:

26. Արքաներին համապատասխանեցրեք իրենց կառավարման վայրերին.

Արքա	Կառավարման վայր
Ա) Աշոտ I	1) Աղձնիք նահանգ
Բ) Աշոտ III	2) Անի
Գ) Տիգրան II	3) Գառնիի տաճար
Դ) Լևոն II	4) Տարսուն
	5) Բագարան

Ա	Բ	Գ	Դ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

27. Հետևյալ իրադարձություններից ո՞րն է հավաստի.

- 1) Դուք միացրել եք լույսը, իսկ լամպը չի վառվել:
- 2) Հրաձիգը կրակել է, և գնդակը դիպել է թիրախին:
- 3) Դուք մուրճով խփել եք ռելսին, և ձայն է հնչել:
- 4) Գիշերը ծագել է արևը:

28. Ինչի՞նչ է հավասար այն պատահույթի հավանականությունը, որ զատը նետելու դեպքում կբացվի 5 թվանշանը:

- 1) $\frac{5}{6}$
- 2) $\frac{1}{6}$
- 3) $\frac{1}{2}$
- 4) $\frac{1}{3}$

29. Ընտրեք այն շարքը, որտեղ թվերը դասավորված են աճման կարգով:

- 1) 12; 25; 6; -2; 0
- 2) 25; 12; 6; 0; -2
- 3) -2; 0; 6; 12; 25
- 4) 0; -2; 6; 12; 25

(30-32) $ABCD A_1 B_1 C_1 D_1$ ուղիղ պրիզմայի բարձրությունը 7 է, իսկ հիմքի AB կողմը 28 է, BC -ն՝ 6-ով մեծ AB -ից:

30. Գտեք $ABCD A_1 B_1 C_1 D_1$ պրիզմայի հիմքի պարագիծը:

- 1) 62
- 2) 124
- 3) 50
- 4) 100


31. Գտեք ABD եռանկյան մակերեսը:

- 1) 476
- 2) 952
- 3) 308
- 4) 616

32. Գտեք $ABCD A_1 B_1 C_1 D_1$ պրիզմայի ծավալը:

- 1) 3332
- 2) 6664
- 3) 2156
- 4) 4312

33. Որո՞նք են A կետի կոորդինատները:



Նկար 1

- 1) $(2, -1)$
- 2) $(1, -2)$
- 3) $(-2, 1)$
- 4) $(-1, 2)$

34. Օգտվելով նկար 1-ից գտեք A կետի համաչափ կետի կոորդինատները

Ox առանցքի նմատմամբ:

- 1) $(-2, 1)$
- 2) $(2, 1)$
- 3) $(-2, -1)$
- 4) $(2, -1)$

35. Հնարամիտ վաճառողը մի քանի կապ ծրար է ստացել, յուրաքանչյուր կապում 100 ծրար: 10 ծրարը նա հաշվում է 10 վայրկյանում: Ամենաքիչը քանի՞ վայրկյանում նա կհաշվի 70 ծրարը:

- 1) 10
- 2) 20
- 3) 30
- 4) 70

36. Քարտեզի վրա, որի մասշտաբը 1: 600000 է: Ինչքա՞ն կլինի երկու քաղաքների իրական հեռավորությունը, եթե այն քարտեզի վրա հավասար է 2,5 սմ:

- 1) 150 կմ
- 2) 15 կմ
- 3) 24 կմ
- 4) 240 կմ

37. Գյուղն ունի 5640 բնակիչ: Նրանցից հասուն տղամարդիկ 1829-ը են, կանայք 2053-ը: Քանի՞ երեխա է ապրում գյուղում:

- 1) 3811
- 2) 3587
- 3) 1758
- 4) 1658

38. Երեք նույնարժեք մետաղադրամներից մեկը կեղծ է և իսկականներից թեթև է: Նժարավոր կշեռքով ամենաքիչը քանի՞ կշռում կատարելով կարելի է պարզել, թե որ մետաղադրամն է կեղծ:

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4

39. Գտեք անհայտ բաժանելին՝ $\square : 43 = 387$:

- 1) 16641
- 2) 9
- 3) 15641
- 4) 81

40. 5 կարմիր և 7 դեղին մատիտ պարունակող տուփից պատահական հանում են մեկ մատիտ: Ամենաքիչը քանի՞ մատիտ պետք է հանել, որպեսզի տուփից դուրս գա կարմիր մատիտ:

- 1) 5
- 2) 6
- 3) 7
- 4) 8

41. Գայլը հետապնդում է նապաստակին, որը նրանից 150 ոտնաչափ հեռու է գտնվում: Գայլը 9 ոտնաչափ երկարությամբ ցատկ է կատարում ամեն անգամ, երբ նապաստակը ցատկում է 7 ոտնաչափ: Քանի՞ ցատկ պիտի անի գայլը՝ նապաստակին հասնելու համար:

- 1) 14
- 2) 18
- 3) 70
- 4) 75

42. Ձեռնարկության տնօրենն իր աշխատողներից յուրաքանչյուրին, եթե տա 5-ական մետաղադրամ, ապա նրա մոտ 30 մետաղադրամ կմնա, իսկ եթե տա 7-ական, ապա 30 մետաղադրամ կպակասի: Քանի՞ աշխատող նա ունի:


- 1) 10
- 2) 15
- 3) 20
- 4) 30

43. Գտեք օրինաչափությունը և գրել բաց թողնված թիվը:

7, 17, 37, 77, ..., 317

Պատ՝

44. Խորանարդի նիստերին գրված են վեց տարբեր միանիշ թվանշաններ: Հակադիր նիստերին գրված թվերի գումարները իրար հավասար են: Որքա՞ն է խորանարդի չերևացող նիստերի թվանշանների գումարը:



Պատ՝

45. Երեխան ունի կենդանիներ: Նրա բոլոր կենդանիները, բացի երկուսից շուն են, բոլորը, բացի երկուսից, կատու են, և բոլորը, բացի երկուսից, թութակ են: Քանի՞ կատու ունի այդ երեխան:

Պատ՝

46. Բազմաբնակարանային շենքի մինչև 4-րդ հարկը հասնող աստիճանը քանի՞ անգամ է երկար մինչև 2-րդ հարկը հասնողից:

Պատ՝

47. Ձախ մասում տրված յուրաքանչյուր բանաձևը համապատասխանեցրեք աջ մասում տրված ֆունկցիայի անվանմանը:

Բանաձև

Անվանում

Ա) $f(x) = kx + b$

1) աստիճանային

Բ) $f(x) = \sin x$

2) գծային

Գ) $f(x) = x^n$

3) լոգարիթմական

Դ) $f(x) = a^x$

4) ցուցային





5) եռանկյունաչափական

Ա	Բ	Գ	Դ

48. Տրված յուրաքանչյուր պատկերը համապատասխանեցրեք իր անվանմանը:

Պատկեր

Անվանում



- 1) շեղանկյուն
- 2) ուղղանկյուն
- 3) շրջանագիծ
- 4) սեղան
- 5) եռանկյուն

Ա	Բ	Գ	Դ

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

49. Հետևյալներից ո՞րն է խառնուրդ:

- 1) ջրածին
- 2) շաքարաջուր
- 3) պղինձ
- 4) սոդա

50. Արևոտ մի օր կարագով ավսեն թողեցին պատուհանագոգին: Երբ որոշ ժամանակ անց վերադարձան պատուհանի մոտ, նկատեցին, որ ավսետում մի քիչ հեղուկ է մնացել: Ի՞նչ պատահեց կարագի կտորի հետ:

- 1) գոլորշիացավ և մնաց հեղուկի տակ
- 2) օդում խառնվեց թթվածնի հետ և վերածվեց հեղուկի
- 3) սառեց և վերածվեց մեկ ուրիշ նյութի
- 4) տաքացավ և վերածվեց հեղուկի

51. Երևույթները լինում են ֆիզիկական և քիմիական: Հետևյալ երևույթներից ո՞րն է ֆիզիկական:

- 1) ջրի գոլորշիանալը
- 2) լուծկու այրվելը
- 3) գինին քացախի վերածվելը
- 4) երկաթի ժանգոտվելը

52. Ի՞նչպես կարելի է երկաթի խարտուքի և ածխի փոշու խառնուրդից առանձնացնել բաղադրիչները:

- 1) գտման միջոցով
- 2) մագնիսի օգնությամբ
- 3) շոգիացման եղանակով
- 4) թորման միջոցով

53. Ձեր քաղաքում աշխատող հետևյալ փոխադրամիջոցներից ո՞րն է ամենաքիչն աղտոտում օդը:

- 1) բենզինով աշխատող մեքենան
- 2) գազով աշխատող ավտոբուսը
- 3) էլեկտրականությամբ աշխատող տրոլեյբուսը
- 4) քարածխով աշխատող գնացքը

54. Ինչո՞ւ են պարանից կախված թաց շորերը չորանում:

- 1) Շորերի ջուրը սառչում է:
- 2) Շորերի ջուրը խտանում է:
- 3) Շորերի ջուրը պնդանում է:
- 4) Շորերի ջուրը գոլորշանում է

55. Նմանատիպ չորս բաժակներում կա 100 մլ ջուր: Յուրաքանչյուր բաժակի մեջ ավելացրել են 10-ական գրամ շաքար տարբեր ջերմաստիճաններում, տարբեր տեսքով և խառնել: Ո՞ր բաժակի շաքարը արագ կլուծվի:

Բաժակ	Շաքարի ձևը	Ջերմաստիճանը
1)	փոշի	10
2)	կտոր	10
3)	փոշի	100
4)	կտոր	100

56. Համապատասխանեցրեք պարզ նյութերի անվանումները և դրանց բանաձևերը:

Պարզ նյութի անվանում	Բանաձև
Ա) ցինկ	1) Zn
Բ) արծաթ	2) O ₂
Գ) քրոմ	3) H ₂
Դ) ջրածին	4) Ag
	5) Cr

Ա	Բ	Գ	Դ

57. Նկարում պատկերված են հորիզոնական հարթ մակերևույթով շարժվող՝ կաթոցիկով սայլակի հետքերը: Ո՞ր դեպքում է սայլակը շարժվել հավասարաչափ:

- | | |
|----------|----------------------|
| 1) ա | • • • • • • • • • ա) |
| 2) բ | ••••••••• բ) |
| 3) ա և գ | • • • • • • • գ) |
| 4) բ և դ | • • • • • • • դ) |

58. Տղան գնդակը նետում է դեպի վեր: Գնդակի թռիչքի՝ փուլերից որո՞ւմ է, նրա վրա ազդում ծանրության ուժ:

- 1) միայն նետման պահին և վեր թռչելիս
- 2) միայն վեր թռչելիս և անկման պահին
- 3) միայն նետման պահին և անկման պահին
- 4) նետման պահին, վեր թռչելիս և անկման պահին

59. Ո՞ր մարմնի նկատմամբ է շարժվում շարժվող գնացքի վագոնում սեղանին դրված գիրքը:

- 1) սեղանի
- 2) ռելսերի
- 3) վագոնի հատակի
- 4) անշարժ նստած ուղևորի


60. Ի՞նչ հատկությամբ են խմբավորվել հետևյալ առարկաները:

Ապակե բաժակ, ավտոմեքենայի դիմապակի, ակնոցի պլաստիկ ապակի:

- 1) մագնիսի կողմից ձգվելու
- 2) լույսը թափանցելու
- 3) ջրում լողալու
- 4) ճկվելու

61. Ի՞նչ նշանի լիցք ունեն նկարում պատկերված բացասականորեն լիցքավորված մեծ գնդի մոտ տեղադրված ա և բ փոքր գնդիկները: Գնդիկների միջև փոխազդեցությունն անտեսել:


- 1) ա-ն՝ դրական, բ-ն՝ բացասական
- 2) ա-ն՝ բացասական, բ-ն՝ դրական
- 3) երկուսն էլ դրական
- 4) երկուսն էլ բացասական



62. Տղան կանգնած է տան տանիքին: Ինչպե՞ս կարող է նա հնարավորինս ավելի շատ մեծացնել իր ճնշումը տանիքի վրա:


- 1) կանգնել մեկ ոտքի վրա
- 2) նստել
- 3) պառկել
- 4) կանգնել երկու ձեռքերի ափերի վրա

63. Ո՞րն է նկարում պատկերված մատիտի ճիշտ պատկերը հարթ հայելում:



Պատասխան՝

64. Նկարում պատկերված ո՞ր թեյնիկի ջրատարողությունն է ամենամեծը:



Պատասխան՝


65. Ո՞ր վիտամինի անբավարարությունից է առաջանում ցինգա հիվանդությունը:

- 1) C
- 2) A
- 3) B₁
- 4) D

66. Ի՞նչ տեսակի առաջին օգնություն պետք է ցույց տալ ձեռքի բաց կոտրվածքի դեպքում:

- 1) մշակել վերքը, վրան դնել փափուկ վիրակապ, այնուհետև՝ բեկակալ
- 2) տուժածին զգուշությամբ պառկեցնել ամուր և հարթ մակերեսին՝ դեմքով դեպի ներքև
- 3) տուժածին պառկեցնել մեջքի վրա
- 4) նստեցնել, տուժածին առաջարկել հնարավորին չափ խորը ներշնչել և արտաշնչել, տաք թրջոց դնել

67. Ո՞ր օրգան-համակարգին է պատկանում ա տառով նշված օրգանը:



- 1) շնչառական
- 2) սիրտ-անոթային
- 3) մարսողական
- 4) արտազատական

68. Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում արտաքին միջավայրի ջերմաստիճանի նվազման դեպքում:

- 1) Մաշկի արյունատար անոթները լայնանում են, և փոքրանում է արյան հոսքի արագությունը:
- 2) Աճում է ջերմաստվությունը:
- 3) Մեծանում է արյան հոսքը դեպի մաշկ:
- 4) Նեղանում են մաշկի մազանոթների լուսաձեռքերը:

69. Մարդու ո՞ր օրգանն է ապահովում արյան մշտական հոսքն անոթներով:

- 1) լյարդը
- 2) թոքերը
- 3) սիրտը
- 4) երիկամները

70. Ո՞ր սննդամթերքն է առավել հարուստ սպիտակուցներով:

- 1) միս
- 2) պղպեղ
- 3) խնձոր
- 4) մեղր

71. Արյան ո՞ր խումբն ունեցող մարդիկ են համարվում համընդհանուր դոնորներ:

Պատասխան՝

72. Մարդու ո՞ր օրգանին ո՞ր գործառույթն է համապատասխանում:

Օրգան

Գործառույթ

- Ա) աղի
- Բ) երիկամ
- Գ) գլխուղեղ
- Դ) թոքեր

- 1) ապահովում է մեզի առաջացումը
- 2) կատարում է հենարանի դեր
- 3) իրականացնում է տրամաբանական մտածողությունը
- 4) մարսում է սնունդը
- 5) ապահովում է շնչառությունը

Ա	Բ	Գ	Դ


73. Կեսօրին Արեգակը հորիզոնի ո՞ր կողմում է լինում:

- 1) արևելքում
- 2) արևմուտքում
- 3) հյուսիսում
- 4) հարավում

74. ՀՀ ո՞ր լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը կլինի ամենացածրը:

- 1) Փամբակի
- 2) Արագած
- 3) Գեղամա
- 4) Վիրահայոց

(75-77) Պատկերում տրված է ՀՀ քարտեզը:



75. ՀՀ քարտեզի վրա Ա տառով ո՞ր գետն է նշված:

- 1) Ախուրյան
- 2) Աղստև
- 3) Դեբեդ
- 4) Որոտան

76. ՀՀ քարտեզի վրա F տառով ո՞ր ջրամբարն է նշված:

- 1) Ախուրյանի
- 2) Ապարանի
- 3) Շամբի
- 4) Սպանդարյանի

77. ՀՀ քարտեզի վրա G տառով ո՞ր մարզն է նշված:

- 1) Սյունիքի
- 2) Վայոց ձորի
- 3) Արարատի
- 4) Արագածոտնի

78. Արարատ լեռան ստորոտին 850 մ բարձրության վրա օդի ջերմաստիճանը 36°C է: Որքա՞ն կլինի նույն պահին օդի ջերմաստիճանը Արարատին լանջին՝ 3350 մ բարձրության վրա (հաշվարկը կատարել 6° -ով):

- 1) 30°C
- 2) 24°C
- 3) 21°C
- 4) 6°C

79. Ո՞րն է նկարում պատկերված լճի վերաբերյալ ճիշտ պնդումը:



- 1) Անհոսք է և աղի:
- 2) Հոսուն է և աղի:
- 3) Անհոսք է և քաղցրահամ:
- 4) Հոսուն է և քաղցրահամ:

80. ՀՀ մարզերից ո՞րը այլ պետության հետ սահման չունի:

- 1) Արարատ
- 2) Վայց ձոր
- 3) Կոտայք
- 4) Արմավիր